Այս ներքին քարեղէն տկարութեանս քաջապէս օգնեց Բաղուայ յարգոյ բժշկաց խորհուրդը, և յատկապէս բազմափորձ բժիշկ պ. Միքայէլ տէր Յովհաննէսեանցի ցոյց տուած Սալվատորի և Գարլսբատի հանքային ջրերն[1]) որ բաւական թեթեւացրին տկարութիւնս և Աստուծով խպատ ազատուելու յոյս ունիմ այս վտանգաւոր տկարութիւնից։

Այսպէս վերջացնելով գործերս՝ յունիսի սկզբներում հեռացայ Բաղուից և ամառը Սաղիանի վանքումն մնալով՝ վերջացրեցի սենեկաց շինութիւնն ոչ բոլորովին, և ց15 սեպտ. շինութեան ծախքն եղաւ 16000 մանէթ, ըստ տօմարի վանահօրն։

Մայիսին պ. Բուդաղեանցներից ստացած 1000 մանէթը ծախսելով շինութեան վրայ՝ մնացինք այլ եւս պարտ 600 մանէթ, որոյ 500 մանէթը ինչպէս վերեւն ասացի, նուիրեց կրօնասիրաբար և ազգասիրաբար մեծապատիւ Կարապետ աղայն Լալաեանց, և այնուհետեւ ց5 դեկտ. հազիւ աւարտելով շինութիւնն՝ ծախքը հասաւ 2200 մանէթի. այս գումարից դուրս գալով 1500 մանէթ նուէրն՝ մնաց վանքի վրայ պարտք 700 մանէթ որոյ 304 մանէթ 12 կոպէկ վճարեց վանահայրն այդ տոյ 1888 թուի կապալադրամից, իսկ մնացած 385 մանէթ 88 կոպէկ պէտք է վճարէ այս 1889 թուի կապալադրամից. եթէ բարեպաշտ Բաղուեցիք չօգնեն։ Վերջապէս այսպէս աւարտելով վանքի նոր սենեկաց շինութիւնն, ընդ նմին և նորոգելով հին Առաջնորդարանն և միւս սենեակներն և ուսումնարանն նոյն 2200 մանէթովն այնինչ յորոց միայն նոր սենեակներն տեսնողները գնահատում են 3—4 հազար մանէթ։

Փորագրել տուեցի նոր սենեկաց դրան ճակատին հետեւեալ արձանագիրն։

---

[1]) 1892 թուի մայիսի Կաթուղիկոսական ընարութեան գրագրութիւնը Տփխիս տարածս միջոցին բժշկապետ Գասպարեանցի խորհրդով գործադրումեմ, «Վիչի Սէլէստան» անունով հանքային ջուրը։ Այս հանքային ջրերի անունները նորա համար եմ գրում այստեղ, որ ինձ նման տկարութիւն ունեցող մարդիկ, կարդացած միջոցին այս գրուածս, իմանան եւ շահուին։